ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2023 թվականի N 1079-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՍԻՆԱՄ ԲԱՐՍԵՂՅԱՆ»-Ի ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Սինամ Բարսեղյան»-ի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի N 99 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ, հրապարակ թիվ 5 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Սինամ Բարսեղյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 23
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2023 թվականի N 1080-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին» N 113-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայսատանի Հանրապետության Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող, ք.Տաշիր, Անի զանգված, թիվ 1 հասցեում գտնվող, թվով 2 անվարտ տաղավարները (յուրքանչյուր տաղավարի մակերեսը 28,5քմ), 5 տարի ժամկետով տրամադրել օգտագործման վարձակալության իրավուքնով «Լիդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության:

2.Վարձակալության վարձավճարը սահմանել ամսական 20000 (քսան հազար) դրամ:

3.«Լիդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկեության՝ ի դեմս տնօրեն Գրիշա Բաղդասարյանի, հետ կնքել գույքի վարձակալության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքը պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 23
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2023 թվականի N 1081-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1059-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 24-ի, «Հայստանի Հանրապետության Լոռու Մարզ Տաշիր համայնք քաղաք Տաշիր Շահումյան Փողոց թիվ 55 հասցեում քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված շինության օրինականացման մասին և համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 06-ի թիվ 341-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N1059-Ա որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 կետով՝

« 1.1 2022 թվականին ինքնակամ կառուցված 71,0 քմ. անավարտ շինությունը ենթակա չէ հաշվառման և օրինականացման»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի
24 ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2023 թվականի N 1082-Ա

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, 4-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 152 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 940-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նիկոլայ Գուրգենի Մալխասյանի (անձնագիր՝ AS0596733, տրված՝ 29.04.2019-ին) դիմումը (մուտք՝ 19/09/2023-ի ՔԴ-1089-23), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N05112019-06-0018 վկայականը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 20239USEWQ ծածկագիրը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումով հաստատված կարգի 3-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ և 17-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2 փետրվարի 2002 թվականի N88-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի N1055-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի N14-Ն որոշումով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, նկատի ունենալով, որ 2020թ-ին կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 4-րդ թաղամաս, Երևանյան փողոց, թիվ 152 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0081-0033) Նիկոլայ Գուրգենի Մալխասյանին սեփականության իրավունքով պատկանող 0,08588 հա մակերեսով հողամասում ինքնակամ

կառուցված 107,34քմ մակերեսով հասարակական նշանակության ավտոտեխսպասարկման կետը և կատարված 1 ներքին ձևափոխությունը՝ համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Պարտավորեցնել Նիկոլայ Գուրգենի Մալխասյանին ինքնակամ 107,34 քմ մակերեսով հասարակական նշանակության կառույցի օրինականացման և 1 ներքին փոփոխության համար սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել (հաշվեհամար՝ 900275081124) ինքնակամ կառույցների օրինականացման համար սահմանված վճարը՝ ընդհանուր շինությունների համար 221720 (երկու հարյուր քսանմեկ հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ:

3. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Փոփոխված համարել 0,08588 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը որպես հասարակական կառուցապատման նշանակության՝ համապատասխանեցնելով օրի նականացվող շինության գործառնական նշանակությանը:

5. Բնակելի նշանակության ավտոտնակի, մառանի, անվադողերի վերանորոգման արհեստանոցի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական նշանակության ավտոտեխսպասարկման կետի:

6. Շինությունների գործառնական նշանակության փոփոխությունները կատարել առանց շինարարական թույտվության տրամադրման:

7. ճարտարապետության, քաղաքաշինության բաժնի պետին՝ գործառնական նշանակությունը փոփոխված անշարժ գույքերը հանել համայնքի բնակելի ֆոնդից:

8. Ուժը կորցրած ճանաչել համայքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 4-րդ թաղամաս Երևանյան փողոց, թիվ 152 հասցեում քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված շինության օրինականացման մասին» համայնքի ղեկավարի թիվ 940-Ա որոշումը:

9. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 24
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2023 թվականի N 1083-Ա

ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N12-Ն հրմանի հավելված 1-ի 8.4 կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման, ծրագրերի, տուրիզմի առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի առաջատար մասնագետների (ծածկագիր՝ 3.1-9, ծածկագիր՝ 3.1-10) համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը՝

1) Հասմիկ Մկրտչյան –Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
2) Դավիթ Ստեփանյան – Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
3) Նորայր Բաղդասարյան- Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
4) Սևադա Սարգսյան-Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
5) Սուսան Մարդոյան – ավագանու անդամ,
6) Նարինե Սոլոյան –ուսումնական հաստատության ներկայացուցիչ:

2. Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Սյուզաննա Սերյոժայի Սոլոյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2023 թվականի N 1084-Ա

ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2.2 կետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն հրմանի հավելված 1-ի 8.4 կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության, հողօգտագործման և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-4) համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի հետևյալ կազմը՝

1)Հասմիկ Մկրտչյան –Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
2) Դավիթ Ստեփանյան- Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ,
3)Նորայր Բաղդասարյան- Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
4) Հովիկ Մարկոսյան -Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ,
5) Հայկ Մարգարյան – ավագանու անդամ,
6) Ռոզա Դավթյան-ուսումնական հաստատության ներկայացուցիչ:

2. Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Սյուզաննա Սերյոժայի Սոլոյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2023 թվականի N 1085-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՊԱՏՎԱԿԱՆԻ»-Ի ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Նարինե Վարդանյան Պատվականի»-ի 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N100 հայտը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 173 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Նարինե Վարդանյան Պատվականի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2023 թվականի N 1086-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշումով և հիմք ընդունելով Լյուդմիլա Նիկոլաևնա Մարտիրոսյանի դիմումը (մուտք՝ 26.10.2023-ի ՔԴ 1225-23)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լյուդմիլա Նիկոլաևնա Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված Մերսեդես Բենց Ե 200 (Mercedes Benz E 200) մակնիշի, 37CX549պետհամարանիշի օտարված ավտոմեքենայի գույքահարկի գերավճարը՝ 13600 (տասներեք հազար վեց հարյուր) դրամը հաշվանցել և մարել Լյուդմիլա Նիկոլաևնա Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված անշարժ գույքի գծով հարկային պարտավորությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2023 թվականի N 1087-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՏԱԿ ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ»-Ի ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Արտակ Ռաֆայելյան Անդրանիկի»-ի 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N101 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապեության օրենքի 45 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, խանութ թիվ 25/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Արտակ Ռաֆայելյան Անդրանիկի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2023 թվականի N 1088-Ա

ՍԱՅԱԹ ՌՈՄԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N30-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետով, հիմք ընդունելով քաղաքացի Սայաթ Ռոմիկի Կիրակոսյանի դիմումը (մուտք՝ 27/10/2023ի ՔԴ-1226-23)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սայաթ Ռոմիկի Կիրակոսյանին տալ պահեստի կառուցման շինարարության թույլտվություն:

2. Սայաթ Ռոմիկի Կիրակոսյանին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081207 հաշվեհամարին մուծել 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սայաթ Ռոմիկի Կիրակոսյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո՛Ւ Մ

27 հոկտեմբերի 2023 թվականի N 1089-Ա

ՇԻՐԻՆՇԱ ԳԵՈՐԳԻԻ ԴԵՐԲԱՍՈՎԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Շիրինշա Գեորգիի Դերբասովի դիմումը (մուտք՝ 22/09/2023-ի ՄՀ-139-23)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Շիրինշա՝ Գեորգիի Դերբասովին տալ բաղնիքի կառուցման նախագծման թույլտվություն:

2.Շիրինշա Գեորգիի Դերբասովը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ՝

27 հոկտեմբերի 2023 թվականի N 1090-Ա

ԹԵԼԵՄԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՎՐԵԺ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացիներ Թելեմակ Հովհաննիսյանը, Մարինե Պողոսյանը և Վրեժ Հովհաննիսյանը հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի հոկտեմբերի 11-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական,եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-053-0008-0007 ծածկագրերով, 0.4743 հա ընդհանուր մակերեսով հողամասը հանդիսանում է Թելեմակ Հովհաննիսյանի, Մարինե Պողոսյանի և Վրեժ Հովհաննիսյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում է հարկվող օբյեկտ :

Նշված հողատմասի հողի հարկը 2009-2020 թվականների համար կազմում է 22.407(քսաներկու հազար չորս հարյուր յոթ) ՀՀ դրամ,որից 15.134 (տասնհինգ հազար

հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 7.273 (յոթ հազար երկու հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2022 թվականների համար կազմում է 843 (ութ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ:

2023 թվականի հոկտեմբերի 11-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հոհոկտեմբերի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել քաղաքացիներ Թելեմակ Հովհաննիսյանը, Մարինե Պողոսյանը և Վրեժ Հովհաննիսյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 19.10.2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացիներ Թելեմակ Հովհաննիսյանի, Մարինե Պողոսյանի և Վրեժ Հովհաննիսյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրեսգրքի 225-րդ հոդվածի ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով ՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Քաղաքացի Թելեմակ Հովհաննիսյանից, Մարինե Պողոսյանից և Վրեժ Հովհաննիսյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 23.252 (քսաներեք հազար

երկու հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ. 22.407 (քսաներկու հազար չորս հարյուր յոթ) ՀՀ դրամ՝ որպես 06-053-0008-0007 ծածկագրերով, 0.4743 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ,որից 15.134 (տասնհինգ հազար հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 7.273 (յոթ հազար երկու հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ, 843 (ութ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ՝ որ պես անշարժ գույքի հարկ:Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ՝ սկսած 28.08.2023 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6.Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275095082 հաշվեհամարին, անշարժ գույքի հարկը՝ 900275002138 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2023 թվականի N 1091-Ա

ՄԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆԻՑ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Լոռու մարզի տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

21.07.2020-ին Մարինե Պողոսյանը մի կողմից և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքը մյուս կողմից կնքել են ՀՀ,Լոռու մարզի Տաշիր համայնքի Կաթնառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 06-053-0126-0071 ծածկագրով, 7 հա մակերեսով հողամասի երեք տարի ժամկետով ,տարեկան 49.000 (քառասունինը հազար) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության պայմանագիր:

Մարինե Պողոսյանը, հանդիսանալով հարկվող օբյեկտի վարձակալ, չի կատարել հողի վարձակալության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները,այն է՝ սահմանված ժամկետում չի վճարել հողի վարձակալության վճարները: Արդյունքում 2023 հուլիսի 21-ին՝ պայմանագրի ժամկետի ավարտից հետո, հողի վարձակալության պարտքը կազմում է 76.857 (յոթանասունվեց հազար ութ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ, որից 58.235 (հիսունութ հազար երկու հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 18.622 (տասնութ հազար վեց հարյուր քսաներկու) ՀՀ դրամ՝որպես տույժ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 11-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հոկտեմբերի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել Մարինե Պողոսյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 17.10..2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Մարինե Պողոսյանի բացակայությամբ):

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ: ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները: Նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հողամասի օգտագործողները պարտավոր են ժամանակին կատարել հողամասերի համար վճարումները: Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ)օգտագործմանը հանձնել գույք,նույն օրենսգրքի 616-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճար(վարձավճարը): Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետը որոշվում են վարձակալության պայմանագրով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:Պայմանագրի 9-րդ կետի համաձայն՝ վճարումները կատարվում են եռամսյակային,10-րդ կետի համաձայն՝ընթացիկ վճարումները օգտվողի կողմից վճարվում են մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Պայմանագրի 11-րդ կետի համաձայն՝ պայմանագրով սահմանված ժամկետներում վճարումներ չվճարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար օգտվողը վճարում է տուժանք՝տարեկան վարձավճարի գումարի 0.5 տոկոսի չափով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ,110-րդ,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ,616-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարինե Պողոսյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 76.857 (յոթանասունվեց հազար ութ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ, որից 64.400 (վաթսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որից 58.235 (հիսունութ հազար երկու հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 18.622 (տասնութ հազար վեց հարյուր քսաներկու) ՀՀ դրամ՝որպես տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275095074 հաշվարկային հաշվին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2023 թվականի N 1092-Ա

ՍԱՐԳԻՍ ԱՍՄԱՐՅԱՆԻՑ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Լոռու մարզի տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

26.06.2020-ին Սարգիս Ասմարյանը մի կողմից և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքը մյուս կողմից կնքել են ՀՀ,Լոռու մարզի Տաշիր համայնքի Կաթնառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 06-053-0126-0053 ծածկագրով, 3.7 հա մակերեսով հողամասի երեք տարի ժամկետով ,տարեկան 25.310 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության պայմանագիր:

Սարգիս Ասմարյանը, հանդիսանալով հարկվող օբյեկտի վարձակալ, չի կատարել հողի վարձակալության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները,այն է՝ սահմանված ժամկետում չի վճարել հողի վարձակալության վճարները: Արդյունքում 2023 հունիսի 26-ին՝ պայամանագրի ժամկետի ավարտից հետո, հողի վարձակալության պարտքը կազմում է 59.213 (հիսունինը հազար երկու հարյուր տասներեք) ՀՀ դրամ, որից 50.672 (հիսուն հազար վեց հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 8.541 (ութ հազար հինգ հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ՝որպես տույժ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 11-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հոկտեմբերի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել Սարգիս Ասմարյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 19.10..2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Սարգիս Ասմարյանը բացակայությամբ):

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը. ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ: ՀՀ հողային

օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները: Նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հողամասի օգտագործողները պարտավոր են ժամանակին կատարել հողամասերի համար վճարումները: Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ)օգտագործմանը հանձնել գույք,նույն օրենսգրքի 616-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճար(վարձավճարը): Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետը որոշվում են վարձակալության պայմանագրով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:Պայմանագրի 9-րդ կետի համաձայն՝ վճարումները կատարվում են եռամսյակային,10-րդ կետի համաձայն՝ընթացիկ վճարումները օգտվողի կողմից վճարվում են մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Պայմանագրի 11-րդ կետի համաձայն՝ պայմանագրով սահմանված ժամկետներում վճարումներ չվճարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար օգտվողը վճարում է տուժանք՝տարեկան վարձավճարի գումարի 0.5 տոկոսի չափով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ,110-րդ,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ,616-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սարգիս Ասմարյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 59.213 (հիսունինը հազար երկու հարյուր տասներեք) ՀՀ դրամ, որից 50.672 (հիսուն հազար վեց հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 8.541 (ութ հազար հինգ հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ՝որպես տույժ :

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275095074 հաշվարկային հաշվին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2023 թվականի N 1093-Ա

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱԼՍՏՅԱՆԻՑ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Լոռու մարզի տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

N 1. 26.06.2020-ին Սվետլանա Գալստյանը մի կողմից և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքը մյուս կողմից կնքել են ՀՀ,Լոռու մարզի Տաշիր համայնքի Կաթնառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 06-053-0126-0044 ծածկագրով, 7 հա մակերեսով հողամասի երեք տարի ժամկետով ,տարեկան 47.880 (քառասունյոթ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության պայմանագիր:

N 1. 21.07.2020-ին Սվետլանա Գալստյանը մի կողմից և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքը մյուս կողմից կնքել են ՀՀ,Լոռու մարզի Տաշիր համայնքի Կաթնառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 06-053-0105-0005 ծածկագրով, 2 հա մակերեսով հողամասի երեք տարի ժամկետով ,տարեկան 14.000 (տասնչորս հազար) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության պայմանագիր:

Սվետլանա Գալստյանը, հանդիսանալով հարկվող օբյեկտի վարձակալ, չի կատարել հողի վարձակալության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները,այն է՝ սահմանված ժամկետում չի վճարել հողի վարձակալության վճարները:

Արդյունքում վարձակալության պայամանագրերի ժամկետի ավարտից հետո, հողի N 1. պայմանագրի վարձակալության պարտքը կազմում է 79.475 (յոթանասունինը հազար չորս հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, որից 71.254 (յոթանասունմեկ հազար երկու հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 8.221 (ութ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ՝որպես տույժ:
N 2. պայմանագրի վարձակալության պարտքը կազմում է 21.665 (քսանմեկ հազար վեց հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ, որից 19.545 (տասնինը հազար հինգ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 2.120 (երկու հազար հարյուր քսան) ՀՀ դրամ՝որպես տույժ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 11-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հոկտեմբերի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել Սվետլանա Գալստյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 19.10..2023) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Սվետլանա Գալստյանի բացակայությամբ):

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ: ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները: Նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հողամասի օգտագործողները պարտավոր են ժամանակին կատարել հողամասերի համար վճարումները: Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ)օգտագործմանը հանձնել գույք,նույն օրենսգրքի 616-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճար(վարձավճարը): Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետը որոշվում են վարձակալության պայմանագրով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:Պայմանագրի 9-րդ կետի համաձայն՝ վճարումները կատարվում են եռամսյակային,10-րդ կետի համաձայն՝ընթացիկ վճարումները օգտվողի կողմից վճարվում են մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Պայմանագրի 11-րդ կետի համաձայն՝ պայմանագրով սահմանված ժամկետներում վճարումներ չվճարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար օգտվողը վճարում է տուժանք՝տարեկան վարձավճարի գումարի 0.5 տոկոսի չափով: Ելնելով ,վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ,110-րդ,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ,616-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչակական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սվետլանա Գալստյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 101.140 (հարյուր մեկ հազար հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը **կարող է** վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն **ստանալուց** և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275095074 հաշվարկային հաշվին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2023թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2023 թվականի N 1094-Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի դիմումը՝ի դեմս գլխավոր տնօրեն Հրանտ Թադևոսյանի՝ (մուտք՝ 2023 թվականի հոկտեմբերի 27-ի ՊՄ-2387-23)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին տալ Տաշիր համայնքի Պրիվոլնոյե բնակավայր տանող միջին ճնշման ստորգետնյա գազատարի մեկուսիչ ծածկույթի վնասված հատվածի վերանորոգման նախագծման թույլտվություն:

2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 30
ք.Տաշիր